

Բայց Կաղանկայտուացիին պատմութիւնը կը բաժնուի երեք գիրք. Առաջինը կը պատմէ Աղուաններու պատմութեան սկիզբէն մինչև մօտ Վարդանանց պատերազմը (451). Երկրորդը կը հասնի մինչև մեր Եզր կաթողիկոսի ժամանակը (640), իսկ Երրորդը մինչև Սմբատ Ա-ի մահը (915): Հետևաբար դժուարութիւն մը կայ այս տեղ, եօթներորդ դարէն մէկը չի կրնար անշուշտ ժ դարուն պատմութիւնն ընել. այս դժուարութիւնն ալ վերցնելու համար՝ Շահնագարեան ենթադրած է թէ Կաղանկայտուացիին պատմութեան երրորդ գիրքը միեւնոյն հեղինակին գործը չէ, այլ շարայարութիւն ուրիշ մէկէն՝ որ կ'ապրէր տասներորդ դարուն:

Դ

Այս համառօտ ուսումնասիրութեան նպատակը պիտի ըլլայ հաստատել թէ Մովսէս Կաղանկայտուացիին պատմութիւնը միակ գրչէ ելած չէ, այլ խմբագրութիւն է այլևայլ դրութիւններու, և Կաղանկայտուացիին Մովսէս հաւաքած, դասաւորած և կարգադրած է զանոնք տասներորդ դարուն:

Այս ապացուցանելու համար գտնենք նախ վերոյիշեալ չորս անձերուն ապրած թուականը (Վաչագան Բ, Տէր Աբաս, Զուռա շիր, և Եղիազար կաթողիկոս): Ասոր համար ալ բաւական դժուարութիւն կայ, այն պատճառով որ Կաղանկայտուացիին ո՛չ թուական կը յիշէ, ո՛չ թագաւորի մը կամ կաթողիկոսի մը ժամանակակից օտար իշխանները, և ո՛չ ալ երկու համանուն թագաւորներու առաջին կամ երկրորդ ըլլալը. այսպէս Աղուան թագաւորներուն մէջ երկու Վաչէ կայ և երկու ալ Վաչագան, որոնք միշտ կը շփոթուին իրարու հետ, մանաւանդ որ Մովսէս շարունակեալ կարգով չ'պատմեր, այլ անկարգ ու խառնակ. այնպէս որ այս գլուխը ներկայ ժամանակի դէպքի մը պատմութիւնն է, յաջորդ գլուխը երկու դար առաջուան դէպք մը:

Ուստի դիւրութեան համար լաւ է գնել հոս Աղուան թագաւորներուն շարքը:

Աղուաններուն բուն ծանօթ պատմութիւնը կ'սկսի Վաչագան առաջին քաջէն. յետոյ կը յաջորդեն կարգով՝

Վաչէ Ա.

Ուռնայր (ժամանակակից Տրդատի)

Յաւագան (Մոսկով. տպ. Վաչագան (Բ))

Միրհաւան (Նոյն՝ Մրհաւան)

Սատոյ

Ասայ

Եսուողէն (ժամանակակից մեր Ս. Մեսրոպին)

Վաչէ Բ

Վաչէ Բէն ետքը՝ երկիրը կը մնայ 30 տարի անիշխան. յետոյ կը նստի Վաչագան Բ բարեպաշտը, որու ժամանակակից է Մովսէս Կաղանկայտուացիին՝ առաջին անգամ ըստ Շահնագարեանի: Վաչագան Բէն ետք դարձեալ անիշխանութիւն մինչև Զուռա շիր. այս շրջանը կը հաշուենք Աղուան կաթողիկոսներու օգնութեամբ: Տէր Աբաս՝ Վաչագան Բէն ետք առաջին կաթողիկոս՝ որ կը նստի մօտ 552ին, յետոյ Տէր Վիրոյ՝ որուն հետ Մովսէս կ'ուղեկցի իբրև պատգամաւոր Խազրայ արքայորդի Շաթին, Տէր Զաքարիա, Տէր Յովհանն, Տէր Ուխտանէս՝ ժամանակակից Զուռա շիր և Տէր Եղիազար՝ որու օրով կը կատարուի խաչի գիւտը:

Վաչէ Բ կ'ապրի 470ին մօտաւորապէս, քանզի Կաղանկայտուացիին ունի նամակ մը ուղղեալ մեր Գիւտ կաթողիկոսէն այս Վաչէին (Մով. Կաղ. Ա. հատ. էջ 103). և որովհետև Գիւտ կը նստի 465-475, Վաչէ ևս համարելի է 470ին: Լայնաբար հաշուելով և ենթադրելով թէ Գիւտի վերջին տարին նստաւ Վաչէ Բ, Վաչէի թուականը գտնեք 475՝ որմէ աւելի ուշ անկարելի է բացարձակապէս: Այս թուականին վրայ աւելցնելով անիշխանութեան երեսուն տարուան շրջանը, կը գտնուի Վաչագան Բ բարեպաշտին թագաւորութեան թուականը՝ դարձեալ լայնաբար, այն է 505՝ զոնէ ամենէն ուշը: Դարձեալ՝ Տէր Աբաս կաթողիկոս նստած է 552ին, որովհետև Կաղանկայտուացիին կը յայտնէ թէ. « Երկրորդ ամին Խոսրովու՝ « արքայից արքայի, յորժամ զսկիզբն (եդին) « Հայ թուականին, ի սոյն ամի փոխեցին « զաթոռ հայրապետութեանն Աղվանից ի « Չողայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարս « տաւ վասն Հինահաղած արշաւանաց թշնա « մեաց խաչին Քրիստոսի: Եւ նստուցին « հայրապետ զՏէր Աբաս ի գաւառէն Մեծ « Իրանց »: (Մով. Կաղ. Ա. հատ. էջ 219): Այս Աբաս կաթողիկոսէն սկսելով առաջ կ'երթանք և կը հաշուենք յաջորդ կաթողիկոսներուն թուականը մինչև Եղիազար, որու ժամանակակից կը յիշուի Կաղանկայտուացիին վերջին անգամ՝ զոնէ ըստ Շահնագարեանի:

Աբաս կը նստի 44 տարի՝ 552-596

Վիրոյ » 34 » 596-630

Զաքարիա » 17 » 630-647

Յովհանն » 25 » 647-672

Ուխտանէս » 12 » 672-684

Եղիազար » 6 » 684-690